ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 433 – Ա 02 մայիսի 2019 թ.

«ԼՃԱՇԵՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգ»-ի 6-րդ և 7-րդ կետերը

որոշում եմ՝

1. Հաստատել 2019 թվականի մայիսի 3-ին, ժամը 10^{30}-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Լճաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Զոհրաբյան Արմեն (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ), Դվոյան Սևակ (մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ), Բուդումյան Խաչատուր (մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ), Սարգսյան Նելսոն (մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ), Շահբազյան Հայկ (մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալի պաշտոնակատար), Գալոյան Մամիկոն (մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ), Շահբազյան Հասմիկ (մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ):

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Արմեն Զոհրաբյանին, քարտուղար՝ Հասմիկ Շահբազյանին:

3. Հանձնաժողովի լիազորությունները համարվում են դադարեցված մրցույթի ավարտից հետո:

02.05.2019

ՄԱՐԶՊԵՏ SANOSYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ